

Շրջակա միջավայրի նախարարության

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ

---

ԱԳՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2023

---

Դեկտեմբեր

Տեղեկագիրը կազմել է ագրոօդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոօդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան

## ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Դեկտեմբերի օդի ամսական միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում բարձր է եղել նորմայից մինչև 4-5 աստիճանով:*




*Ամսվա ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են 1-8-ը, 26-30-ին. Տավուշում գրանցվել է +19…+23$^{0}$C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +13…+15$^{0}$C, նախալեռնային շրջաններում՝ +14…+16$^{0}$C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +22…+24$^{0}$C, նախալեռնային շրջաններում՝ +17…+21$^{0}$C, Շիրակում՝ +8…+12$^{0}$C, Կոտայքում՝ +9…+12$^{0}$C, Գեղարքունիքում՝ +11…+14$^{0}$C (Սեմյոնովկա՝ +8$^{0}$C), Լոռիում՝ +16…+20$^{0}$C, Արմավիրում՝ +15...+18$^{0}$C, Արարատում՝ +15…+17$^{0}$C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +8…+10$^{0}$C, նախալեռներում՝ +10…+14$^{0}$C:*

*Ամսվա ամենացածր ջերմաստիճանները դիտվել են 19-21-ն ընկած ժամանակահատվածում. Տավուշում գրանցվել է -2…-7$^{0}$C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ -13…-15$^{0}$C, նախալեռնային շրջաններում՝ -6…-8$^{0}$C, Սյունիքի հովտային շրջաններում՝ 0…-5$^{0}$C, նախալեռնային շրջաններում՝ -16…-18$^{0}$C (Գորիս՝ -8$^{0}$C), Շիրակում՝ -10…-14$^{0}$C (Աշոցք՝ -17$^{0}$C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ -11...-13$^{0}$C, նախալեռնային շրջաններում՝ -7…-9$^{0}$C, Գեղարքունիքում՝ -8…-13$^{0}$C, (Մասրիկ, Գավառ՝ -16...-19$^{0}$C), Լոռիում՝ -10…-14$^{0}$C (Օձուն՝ -7$^{0}$C), Արմավիրում՝ -8...-10$^{0}$C, Արարատում՝ -6…-8$^{0}$C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ -14…-16$^{0}$C, նախալեռներում՝ -6…-8$^{0}$C:*




Ամսվա ընթացքում տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 18-45մմ (73-119%), Լոռիում՝ 13-22մմ (79-117%), Տավուշում՝ 24-29մմ (121-135%), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 18-48մմ (78-97%), նախալեռներում՝ 17-20մմ (68-90%), Գեղարքունիքում՝ 19-41մմ (93-168%), Կոտայքի լեռնային շրջաններում՝ 51-56մմ (101-117%), նախալեռներում՝ 33մմ (90%), Արմավիրում՝ 12-22մմ (67-101%), Արարատում՝ 10-25մմ, (62-106%), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 88մմ (144%), նախալեռներում՝ 27մմ (101%), Սյունիքի հովտային շրջաններում՝ 16-17մմ (60-102), նախալեռներում՝ 28-34մմ (113-143%):

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները գրանցվել են երկրորդ և երրորդ տասնօրյակներում. լեռնային և առանձին նախալեռնային շրջաններում՝ -15...-22$^0$C (Մարտունի՝ -25$^0$C) Արարատյան դաշտում, Արագածոտնի, Վայոց ձորի նախալեռներում՝ -8...-11$^0$C, Տավուշի և Սյունիքի հովտային շրջաններում՝ -4...-5$^0$C:




Ամսվա առաջին կեսին ձյան ծածկը շրջանների մեծ մասում բացակայել է, միայն առանձին լեռնային շրջաններում այն կազմել է 1-5սմ:




Դեկտեմբերի 31-ի դրությամբ ձյան ծածկը բարձրությունն Արագած բ/լ-ում կազմել է 73սմ, Ջերմուկում՝ 30սմ, Սեմյոնովկայում՝ 21սմ, Հրազդանում՝ 13սմ, Ամբերդում, Սևանում՝ 6-8սմ, Աշոցքում, Արթիկում, Ամասիայում, Պուշկինի լ/ք-ում, Ֆանտանում, Ապարանում, Անանուն լեռնացքում՝ 1-4սմ, մնացած շրջաններում ձյան ծածկը բացակայել է:

***Աշնանացան ցորենի ձմեռման պայմանները***

*Ամսվա սկզբին լեռնային և որոշ նախալեռնային շրջաններում աշնանացան ցորենը գտնվել է ձմեռային հանգստի շրջանում: Առանձին նախալեռնային և հովտային շրջաններում վեգետացիան դադարել է դեկտեմբերի երկրորդ տասնօրյակում, բազմամյա միջին ժամկետներից 10-20 օր ուշ:*




*Շրջանների մեծ մասում աշնանացանն անցել է ձմեռման թփակալած, առանձին շրջաններում՝ երրորդ տերևի և հանգուցային արմատների առաջացման փուլերում:*

***Աշնանացանն անցել է ձմեռման հետևյալ փուլերում***

| Երրորդ փերև | Հանգուցային արմատներ | Թփակալում | |
|---|---|---|---|
| ***Մարտունի*** | *Մերձավան* | *Գյումրի* | *Արթիկ* |
| | | *Սիսիան* | *Արարատ* |
| | | *Մասրիկ* | *Ուրցաձոր* |
| | | *Ֆանտան* | *Մարտունի* |
| | | *Թալին* | *Օձուն* |
| | | *Եղվարդ* | *Մասրիկ* |

*Տեղումների բացակայության կամ սակավության հետևանքով ամսվա առաջին կեսին աշնանացանի դաշտում ձյունածածկույթը բացակայել է, միայն երկրորդ տասնօրյակի վերջին և երրորդ տասնօրյակում դիտված տեղումների հետևանքով առանձին լեռնային և նախալեռնային շրջաններում աշնանացանի դաշտում առաջացել է 2-20սմ ձյունածածկույթ:*

*Ամսվա վերջին հովտային շրջաններում հողը սառած էր 2-6սմ, լեռնային շրջաններում՝ 12-13սմ խորությամբ:*

*Դեկտեմբերին աշնանացանի համար վտանգավոր ջերմաստիճաններ չեն դիտվել:*